Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 702 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (COAF) նպատակն է բարձրացնել մարզերում բնակիչների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելը ներառում է զուգահեռաբար իրականացվող կրթական, սոցիալական, առողջապահական, սպորտային, տնտեսական և գյուղատնտեսական միջոցառումներ, ինչպես նաև համայնքի համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքների վերանորոգումներ, բարելավումներ: Անհատույց հիմքերով իրականացվող կրթական միջոցառումների նպատակն է զարգացնել շահառու համայնքների երեխաների մտահորիզոնը և կարողությունները՝ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով: «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոնի ստեղծման նպատակն է նպաստել համայնքների և նրա բնակիչների բազմակողմանի զարգացմանը՝ դրանք աշխարհին հաղորդակից դարձնելու միջոցով: Որպես ոչ ֆորմալ կրթական ծրագրի մաս կազմող գերազանցության կենտրոն՝ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ը ժամանակակից հաղորդակցային ու տեղեկատվական տեխնոլոգիաների, ամառային դպրոցների, գիտահավաքների, տարածաշրջանային քննարկումների և այլ կարևոր միջոցառումների կազմակերպման միջոցով աշխարհի լավագույն մասնագետներին ու ռեֆորմատորներին կապում է բնակավայրերի հետ՝ տարածելով կրթության, առողջապահության, արվեստի, գիտության, շրջակա միջավայրի ու տեխնոլոգիայի բնագավառների առաջատար փորձն ու մեթոդները: Տնտեսական միջոցառումների նպատակն է ֆինանսական ներդրումների միջոցով զարկ տալ բնակավայրերում տնտեսական զարգացմանը, գործարարների կարողությունների զարգացմանը:

		Սպորտային միջոցառումների նպատակն է համայնքային բնակիչների և «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոնի շահառուների առողջ ապրելակերպի խրախուսումը՝ համապատասխան պայմաններ ստեղծելու միջոցով: Սպորտային մարզադաշտից օգտվելու են համայնքի բնակիչները: Կենտրոնում գործելու են մարզասրահ և հանդերձարան, ինչպես նաև վազքուղի և հեծանվային ուղի: Գյուղատնտեսական միջոցառումների նպատակն է «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ՖԱՐՄ» գյուղատնտեսական համալիրում, հիմնելով խելացի անասնագոմ, կիրառել նորարարական լուծումներով անասնաբուծության մեթոդներ՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը: «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ՖԱՐՄ» գյուղատնտեսական համալիրում խելացի անասնագոմի իրականացումը նպաստելու է տարածաշրջանի գյուղատնտեսական արդյունաբերության զարգացմանը, ինչպես նաև բնակիչների անասնաբուծության ներուժի և կյանքի որակի բարելավմանը: Անասնաբուծության ծրագրերին զուգահեռ նախատեսվում են գյուղատնտեսական արդյունաբերական տեխնոլոգիաների մասնագիտական կրթական ծրագրեր, որը նպաստելու է տարածաշրջանի գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը և յուրօրինակ մշակույթի հիմք է լինելու՝ խթանելով սերունդների գիտելիքները գյուղատնտեսության ոլորտում: Ենթակառուցվածքների կառուցման, վերանորոգման և բարելավման նպատակն է ստեղծել անհրաժեշտ շինություններ և միջավայր վերը նշված նպատակների իրագործման համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով՝ օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Չիլդրեն Օֆ Արմենիա ֆանդ Ինք.», Նյու Յորք, ԱՄՆ, 149 5-րդ ավենյու, սենյակ 500 (Children of Armenia Fund Inc. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA.) և դոկտոր Գարո Հ. Արմեն
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ քաղ. Երևան 0010, Մելիք Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 02569972)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ, Գորիս համայնք, համայնքային զարգացում
6.	Ծրագրի բյուջեն	5,250,000,000 դրամ

7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի, Գորիս բազմաբնակավայր համայնքի բնակիչներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև 2033 թվականի սեպտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Ծրագրի I փուլում բարեկարգվելու է «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոնի տարածքը և զուգահեռաբար կառուցվելու է կենտրոնի գլխավոր մասնաշենքը և դրան հարակից շինությունները: Ծրագրի սույն բաղադրիչը իրականացվելու է 2023 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 3,490,000,000 դրամի չափով: 2. Ծրագրի II փուլում բարեկարգվելու է ֆուտբոլի մարզադաշտը ու դրան հարակից և անհրաժեշտ ենթակառուցվածքները: Իրականացվելու է 2024 թվականի հունիսի 15-ից մինչև 2030 թվականի հունիսի 15-ը ընկած ժամանակահատվածում՝ 440,000,000 դրամի չափով: 3. Ծրագրի III փուլում իրականացվելու է «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ՖԱՐՄ» գյուղատնտեսական համալիրի բարեկարգում, խելացի անասնագոմի և դրան հարակից շինությունների կառուցում, ինչպես նաև գյուղատնտեսական հողերի մշակում: Իրականացվելու է 2025 թվականի հուլիսի 15-ից մինչև 2033 թվականի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում՝ 1,270,000,000 դրամի չափով: 4. Կազմակերպական ծախսեր՝ ընդամենը 50,000,000 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոնի տարածքի բարեկարգում՝ ընդամենը 1,200,000,000 դրամ՝ 1) «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոնի արտաքին բարեկարգման, անվտանգության և սպասարկման շենքերի/շինությունների կառուցման և ներքին հարդարման, բարեկարգման, ճանապարհների, ավտոկայանատեղիների և լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ՝ ներառյալ վերելակների և շարժասանդուղքի նախագծման, կառուցման և փորձարկման, բակային տարածքների բարեկարգման, ցանկապատերի և դարպասների տեղադրման, կանաչապատման աշխատանքներ, ինչպես նաև Վարարակ գետի առափնյա հատվածների կարգավորման, հենապատերի և լանջերի կայունացման հետ կապված շինությունների կառուցման աշխատանքներ՝ ընդամենը 725,000,000 դրամ. 2) «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոնի ջրամբարի, ջրամատակարարման և կոյուղու համակարգերի, սեպտիկ հորերի, ջրի և կոյուղու զտման և մաքրման կայանի

		նախագծման, կառուցման և փորձարկման աշխատանքներ՝ ընդամենը 85,000,000 դրամ. 3) «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոնի էլեկտրամատակարարման բարձր և ցածր լարման ցանցի՝ ներառյալ ենթակայանի կառուցման, համակարգերի ձեռքբերման կամ ներմուծման, տեղադրման և մոնտաժման աշխատանքներ՝ ընդամենը 150,000,000 դրամ. 4) «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոնի ինժեներական համակարգերի՝ ներառյալ անվտանգության համակարգերի, ինտերնետային և հեռախոսակապի ցանցերի կառուցման, մոնտաժման, տեղադրման և փորձարկման աշխատանքներ՝ ընդամենը 95,000,000 դրամ. 5) «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոնի արևային ֆոտովոլտային տեղակայանի նախագծում, արևային ֆոտովոլտային մարտկոցների, վահանակների և դրանց համար անհրաժեշտ գույքի, այլ պարագաների, սարքավորումների ձեռքբերման կամ ներմուծման, տեղադրման և փորձարկման աշխատանքներ՝ ընդամենը 145,000,000 դրամ: 2. «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» գլխավոր մասնաշենքի կառուցում՝ ընդամենը՝ 2,290,000,000 դրամ՝ 1) «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» գլխավոր մասնաշենքի կառուցման ընդհանուր շինարարական, ներքին հարդարման, բարեկարգման աշխատանքներ՝ 1,375,000,000 դրամ. 2) «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» գլխավոր մասնաշենքի դռների և պատուհանների պատրաստման, տեղադրման և վերազինման աշխատանքներ՝ ընդամենը 120,000,000 դրամ. 3) «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» գլխավոր մասնաշենքի էլեկտրամատակարարման և այլ ցածր լարման ցանցերի (մալուխային) ցանցերի, ջեռուցման, օդափոխության և օդորակման նախագծման, մոնտաժային և տեղադրման աշխատանքներ՝ ընդամենը 220,000,000 դրամ. 4) «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» գլխավոր մասնաշենքի կահույքի, սարքավորումների և այլ անհրաժեշտ գույքի ձեռքբերում, ներմուծում (ներառյալ՝ կահավորման պարագաների ներմուծման, նախագծման և պատրաստման աշխատանքները)՝ ընդամենը 520,000,000 դրամ. 5) «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» գլխավոր մասնաշենքի համակարգչային և էլեկտրոնային

		սարքավորումների ձեռքբերման, ներմուծման, տեղադրման և ցանցային միացման աշխատանքներ՝ ընդամենը 55,000,000 դրամ: 3. Ֆուտբոլի մարզադաշտի և դրան հարակից և անհրաժեշտ ենթակառուցվածքների բարեկարգում և կառուցում՝ ընդամենը 440,000,000 դրամ՝ 1) երկրաբանական հետազննության ու լանջերի ամրացման իրականացում, բարեկարգման և հողային աշխատանքներ, ինչպես նաև վազքուղի և հեծանվային ուղիների կառուցում, էլեկտրամատակարարման և ցածր լարման ցանցերի ձեռքբերում և մոնտաժային աշխատանքներ, ջրամատակարարման և ոռոգման համակարգի ձեռքբերում և մոնտաժային աշխատանքներ, արտաքին բարեկարգում, ճանապարհների և ավտոկայանատեղիների կառուցում, անվտանգության, ինֆորմացիոն և տեսահսկման ցանցերի կառուցման, մոնտաժման, և տեղադրման աշխատանքներ, շինարարական և ներքին հարդարման աշխատանքներ, դռների և պատուհանների պատրաստում և տեղադրում, կահույքի և կահավորման պարագաների ներմուծում, դրանց նախագծման և պատրաստման աշխատանքներ՝ 360,000,000 դրամ. 2) մարզադաշտի և հանդերձարանի սպասարկման, գործունեության և շահագործման կազմակերպման համար սարքավորումների, նյութերի և պարագաների, այլ անհրաժեշտ գույքի ձեռքբերում, ներմուծում և մոնտաժման աշխատանքներ՝ ընդամենը 80,000,000 դրամ: 4. «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ՖԱՐՄ» գյուղատնտեսական համալիրի բարեկարգում, խելացի անասնագոմի և դրան հարակից շինությունների կառուցում, ինչպես նաև գյուղատնտեսական հողերի մշակում՝ ընդամենը 1,270,000,000 դրամ՝ 1) «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ՖԱՐՄ» գյուղատնտեսական համալիրի բարեկարգում և գյուղատնտեսական նշանակության հողերի նախապատրաստում, բարելավում և մշակում՝ ընդամենը 300,000,000 դրամ. 2) խելացի անասնագոմի և դրան հարակից պահեստային, անասնաբուժական և վարչական շինությունների կառուցում, բարեկարգում՝ ընդամենը 700,000,000 դրամ. 3) անասնաբուծության և ոռոգման տեխնիկայի ու սարքավորումների ձեռքբերում կամ ներմուծում, սպասարկման, տեղադրման և մոնտաժման աշխատանքների իրականացում՝

		270,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր՝ ընդամենը 50,000,000 դրամ՝ 1) ենթակառուցվածքների թիմի բնականոն երթևեկությունը ապահովելու համար ամենագնաց ավտոմեքենայի ձեռքբերում՝ ընդամենը 30,000,000 դրամ. 2) այլ ծախսեր՝ 20,000,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի և Գորիսի համայնքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

11.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ